ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **21/փետրվարի/2020 թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ...7... անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալ Սամվել Մարգարյանը, Հերհեր գյուղի վարչական ղեկավար Անդրանիկ Աբրահամյանը:

Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 21-ի արտահերթ նիստի հետևյալ օ ր ա կ ա ր գ ը.

1.1. Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.2. Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը հավանություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----------7 *Դեմ*----------0 *Ձեռնպահ*----------0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 19-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՀԵՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետին, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետին համապատասխան և հիմք ընդունելով Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 29.01.2020 թ. թիվ 10 դրական եզրակացությունը՝

1. Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղի տարածքում գտնվող, «ՍՈՒՆ ՍՈԼԱՐ» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասերը (մակերեսները՝ 2,52 հա, 2,7 հա և 1,42746 հա, կադաստրային ծածկագրերը՝ համապատասխանաբար՝ 10-028-0148-0011, 10-028-0148-0010 և 10-028-0148-0062) փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության հողերի կատեգորիա՝ էներգետիկայի հողերի գործառնական նշանակությամբ:

2. Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղի տարածքում գտնվող, «ԱՐՄ ՍՈԼԱՐ» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասերը (մակերեսները՝ 1,41031 հա, 0,09 հա, 2,79768 հա և 0,14 հա, կադաստրային ծածկագրերը՝ համապատասխանաբար՝ 10-028-0148-0068, 10-028-0148-0029, 10-028-0148-0060 և 10-028-0149-0025) փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության հողերի կատեգորիա՝ էներգետիկայի հողերի գործառնական նշանակությամբ:

3. Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղի տարածքում գտնվող, «ԴՈՒՍՏՐ ՍՈԼԱՐ» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասերը (մակերեսները՝ 1,43192 հա, 0,49795 հա, 1,32895 հա և 1,8 հա, կադաստրային ծածկագրերը՝ համապատասխանաբար՝ 10-028-0148-0063, 10-028-0148-0064, 10-028-0148-0069 և 10-028-0148-0005) փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության հողերի կատեգորիա՝ էներգետիկայի հողերի գործառնական նշանակությամբ:

4. Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղի տարածքում գտնվող, «ԱՅՍՈԼԱՐ» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասերը (մակերեսները՝ 0,75 հա, 1,2442 հա, 0,29903 հա, 2,21545 հա, 0,15 հա, 2,3 հա և 0,89317 հա, կադաստրային ծածկագրերը՝ համապատասխանաբար՝ 10-028-0148-0017, 10-028-0148-0059, 10-028-0148-0058, 10-028-0148-0061, 10-028-0148-0019, 10-028-0148-0066 և 10-028-0148-0067) փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության հողերի կատեգորիա՝ էներգետիկայի հողերի գործառնական նշանակությամբ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----7---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 20-Ա/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՀԵՐ ԳՅՈՒՂԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով և համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշման՝

1. Հավանություն տալ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը. համայնքին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասը (հողատեսքը՝ այլ, մակերեսը՝ 0,02417 հա, կադաստրային ծածկագիրը՝ 10-028-0167-0024) փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական

օբյեկտների նշանակության հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվել է. Կայացած է որոշում N 2-Ա
Կողմ 7 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	ստորագրություն
Բաբայան Կավկազ Ջավենի	
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի	
Բագրատյան Արտակ Կալենի	
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	
Գրիգորյան Արմեն Գրիշայի	
Համբարձումյան Մխիթար Սամվելի	
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	
Սարգսյան Համլետ Ժորայի	
Սիմոնյան Արտուշ Էդվարդի	
Ստեփանյան Գագիկ Ստեփանի	

Ջերմուկ համայնքի ղեկավար՝

ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Գոհար Ծատուրյան

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ 08913735